ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մանկավարժական աշխատողի թափուր տեղի

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգը՝ «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա է «Ֆիզկուլտուրա» առարկայի դասախոսի թափուր աշխատատեղ:

Հանրակրթական առարկաների դասախոս կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Մրցույթին մասնակցելու համար «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ✓ դիմում (Ձև 1),
- ✓ կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- ✓ անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- ✓ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ✓ ինքնակենսագրություն (Ձև 4),
- ✓ մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- ✓ այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- ✓ Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
- ✓ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ներկայացնել «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ (ք. Նոյեմբերյան, Շիրազի 17) 2026թ. ապրիլի 27-ից մինչև 2026թ. մայիսի 12-ը ներառյալ: Մրցույթը տեղի կունենա 2026թ. մայիսի 15-ին ժամը 15:00:

Հարգանքով՝

«Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Կարեն Նազարյան

Կ.Տ